



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2020 թվականի թիվ 43-Ա
ք. Երևան

**«ԴԻՋԻ ԹՎ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ
ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ԴԻՋԻ ԹՎ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2020 թվականի մայիսի 8-ի և մայիսի 23-ի դիմումները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Բավարարել «ԴԻՋԻ ԹՎ» ՍՊ ընկերության դիմումները և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2020թ. մայիսի 27
ք. Երևան

Հեռուստաձրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«Մատչ! Պլանետա» «Կինոպրեմիերա» «Կինոխիտ» «Կինոսեմյա» «Սուժակոյե Կինո» «Նաշե Նովոյե Կինո»	31.12.2020թ.
«Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ» «Կարուսել Ինթերնեյշնլ» «Դոմ կինո» «Բոբյոր» «Դոմ Կինո Պրեմիում» «Վրեմյա. Դայլոկոյե ի բլիզկոյե» «Տելեկաֆե» «Սուզիկա Պերվոգո» «Ամեդիա Պրեմիում Էյշ Դի»	31.12.2020թ.
«Բոկս ՏՎ» «Կինոկոմեդիա» «Ինդիյսկոյե Կինո» «Կուխնյա ՏՎ» «Լյա-Մինոր ՏՎ» «ՏՆՏ Սյուզիք»	31.12.2020թ.
«USU» «Ռեն ՏՎ» «Պերեց» «Դոմաշնիյ» «5 Կանալ»	31.12.2020թ.
«THT- Comedy» «THT4 International» «Friday International»	31.12.2020թ.
«Շանթ»	անժամկետ
«Կինոման» «Ֆիլմ Zone» «Հայ TV» «Թավա TV» «ԽաղԱլիք» «ArmNews24» «Բազմոց TV» «Ֆիթնես TV» «Սուզոն»	անժամկետ